

378

4-13







ԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ՃԾ.

ԴՈՐՊԱՏԻ ՀԱՅ  
ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ

ԴԿՏ. Ա. ԱԲԵՂԵԱՆ

ԴԱՍԱԽՑ ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ՎԻԵՆՆԱ

ՄԵԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1942

378

Ա-13



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ՀԱՏՈՐ ՃԾ

---

NATIONALBIBLIOTHEK

BAND CL

DIE ARMENISCHE  
STUDENTENSCHAFT DER  
DORPATER UNIVERSITÄT

VON

DR. A. ABEGHIAN



WIEN

MECHITARISTEN-BUCHDRUCKEREI

1942

ԴՈՐՊԱՏԻ ՀԱՅ  
ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ

**ԴԿՏ. Ա. ԱԲԵՂԵԱՆ**

ԴԱՍԱԽՑՄ ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



**ՎԻԵՆՆԱ**

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1942



## ԳՈՐԳԱՏԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Տարիներ առաջ սնուցած վախազս՝ այցելել Դորպատ ու տեղւոյն վրայ ուսումնասիրութեան համար նիւթեր հաւաքել այդ նշանաւոր համալսարանական քաղաքի հայ ուսանողութեան մասին, ի կատար ածուցաւ 1939 թ. ամառը :

Բերլինի համալսարանին կից իմ պաշտօնավարած Արտասահմանադիտական ձեւարանի (նախապէս՝ Արեւել. Լեզուների Սեմինար) վերատեսուչ Prof. C. Scharschmidt ծանօթանալով մտադրութեանս՝ բարոյապէս ու նիւթապէս սատար հանդիսացաւ նրա իրադործման : Եւ այսպէս, 1939 թ. Յուլիս 15—Օգոստ. 14 նուիրեցի դորպատեան ճամբորդութեան, նախապէս թղթակցութեան մէջ մտած լինելով այնտեղի համալսարանի, նրա միջոցով նաեւ Էստոնիայի պետական դիւանատան վարչութեան հետ՝ որ դանւում է նոյն այդ քաղաքում եւ ուր պահւում է համալսարանի դիւանը : Ներկայիւս տալիս եմ կատարած պրպտումներիս ամփոփումը եւ ընդհանուր եզրակացութիւնը միայն, մանրամասնութիւնները վերապահելով առանձին աշխատութեանց :

Ե. Խ Ա Չ Ա Տ Ո Ի Ր Ա Յ Յ Վ Ե Ա Ն

Միանգամայն հասկանալի պատճառով հետաքրքրութեանս կենտրոնական առարկան կազմում էր Հայոց նոր գրականութեան հայր Խաչատուր Աբովեանի շրջանը: Մեծ շահեկանութիւն էին ներկայացնում բնականաբար դորպատեան տարիները մեր վերածնութեան նաեւ միւս ոահվիրաների՝ Ստեփան Նազարեանցի եւ այլոց: Աբովեանի պարզան ներկայացնում էր մասնակի շահեկանութիւն նաեւ հետեւեալ պատճառով: Յայտնի է որ նրա անձին ու կենսագրութեան նուիրուած գրականութեան մէջ տարակոյս է յարուցուած այն մասին թէ արդեօք Աբովեան առհասարակ ուսանող եղա՞ծ է Դորպատի համալսարանում: Եւ այդ տարակոյսը համարուել է հիմնաւոր յատկապէս այն լուսարանութիւնից յետոյ, որ 1912 թ. տուել է յիշեալ համալսարանի տնօրէնը, որպէս պատասխան Շուշիի Հայոց թեմական դպրոցի տեսուչ Բ. Եարամիշեանի կողմից իրեն ուղղուած մի հարցումի<sup>1</sup>: Այդ պատասխանի մէջ ասուած է թէ Դորպատի համալսարանի ուսանողական ցանկերի մէջ առհասարակ չի յիշուած Խաչատուր Աբովեան, կայ սակայն Վարդան Աբովեան անունը (Խաչ. Աբովեանի որդին): Ես եւս, Դորպատ մեկնելուցս առաջ իսկ, պրպտելով Դորպատի համալսարանի ուսանողական ցանկերը, այս-

<sup>1</sup> Տես «Հանդէս Ամսօրեայ», 1913 թ., 377—379:

պէս կոչուած *Album Academicum*ի տպագրութիւնները, չէի դտած այնտեղ թաշատուր Արովեան անուներ :

Հասկանալի է ուրեմն, որ իմ պրպտումներս Գորպատի համալսարանի զիւանումամենից առաջ նուիրուած էին այդ հարցի պարզարանութեան : Նախ եւ առաջ ձեռքս առի *Album Academicum*ի բուն իսկ սկզբագիրը, ձեռագիր մատեանը, բաղկացած մի քանի ընդարձակածաւալ կաշեկաղմ հատորներից, ուր մի առ մի, համալսարանի հիմնադրման (աւելի ճիշդը՝ վերակաղմութեան) օրից սկսած (1802 թ.) մինչեւ վերջ, արձանագրուած են իսկական ուսանողների անունները, նրանց մասին մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններով հանդերձ : Եւ որովհետեւ բացի թաշ. Արովեանից Գորպատի համալսարանի երբեմնի բոլոր միւս հայ ուսանողների մասին եւս նիւթեր պիտի հաւաքէի, ուստի եւ ծայրէ ծայր կարդացի *Album Academicum*ի՝ ժամանակադրական կարգով կատարուած ուսանողական արձանագրութեանց այդ միանդամայն անթերի մատեանները, ամէնն անխտիր : Ու բնաւ չդտայ այնտեղ թաշատուր Արովեան անուներ :

Պրպտումներ արի, ի հարկէ, զիւանական այլ կարգի աղբիւրների մէջ եւս — Համալսարանի Խորհուրդի եւ վերատեսչութեան, Քակուլտետի, այլ եւ համալսարանին կից եղած մանկավարժական — բանասիրական Սեմինարի, ինչպէս նաեւ ուսուցչական Սե-

մինարի դորժերը ու մի շարք ուրիշներ, եւ սակայն՝ դարձեալ ոչ մի տեղ արձանադրուած դոսայ Խաչատուր Աբովեան անունը : Թերթեցի Դորպատի գիմնազիոնի աշակերտական արձանադրութեանց մատեանն եւս, — դարձեալ ոչ :

Միւս կողմից, սակայն, մի շարք ուրիշ աղբիւրներ որոշապէս ասում են, որ Խաչատուր Աբովեան ուսանող եղած է Դորպատի համալսարանում : Այսպէս, Կոմս Պասկելի մի դրութեան մէջ, դրուած 1830 թ. Յուլ. 4ին, ուրեմն Աբովեանի Դորպատ դնալուց առաջ դեռ, ասուած է թէ «արդէն իսկ հրամայեալ է Համալսարանին Դերպատոյ ընդունել դպատանին դոսայ ի դնալ նորա անդ», «զի ուսցի անդ վարժապետ անուամբ արքունի ծախիւք<sup>2</sup>» : Ապա, Դորպատից դրած իր առաջին նամակներից մէկի մէջ իսկ՝ Աբովեան ասում է. «Համալսարանն հրամայեաց փոխել զհանդերձս<sup>3</sup>» : Խօսքը վերաբերում է ի հարկէ Աբովեանի հոգեւորականի սքեմին : Արդ, այդ կարգադրութիւնը միանգամայն անհասկանալի պիտի լինէր, եթէ Աբովեան դասուած չլինէր ուսանողների շարքը : Նոյնն է հաստատում նաեւ այն պարագան, որ Աբովեանին համալսարանի կողմից տրուած է եղել վարքի եւ յառաջա-

<sup>2</sup> «Հանդէս Ամսօրեայ», 1929 թ., 402—403 :

<sup>3</sup> Նոյնտեղ :

դիմութեան վկայական <sup>4</sup> : Վերջապէս, Աբովեան ինքն է դրած զանազան առիթներով, թէ ուսած է Դորպատի համալսարանում <sup>5</sup> : Անդրկովկասի դպրոցական վարչութեան ներկայացրած իր տեղեկագիրներէ մէջ եւս Աբովեան բացորոշ յայտնում է թէ բարձրագոյն ուսում ստացել է Դորպատի համալսարանում <sup>6</sup> :

Աբովեանի ժամանակակիցները յայտնած են նոյն այդ կարծիքը նրա մասին : Եթէ օրինակ Ստեփան Նազարեանց, որ 1835—1840 թ. արձանագրուած, իսկական ուսանող եղած է Դորպատի համալսարանում, յանուն վերջնոյս հոգաբարձուի 1836 թ. 25 Սեպտ. թուակիր իր խնդրագրի մէջ <sup>7</sup> ասում է թէ ինքը, Նազարեանց, Դորպատից իր բարեկամ Պաշատուր Աբովեանի դրած նամակներէ տպաւորութեան տակ է լի ողբերութեամբ այնտեղ՝ Դորպատ եկել ուսանելու նպատակով, ուր եւ գտնւում է մի քանի տարուց ի վեր, ասլա այդ եւս ապացոյց <sup>8</sup> է այն բանի, որ Աբովեան մօտէն ծա-

<sup>4</sup> «Սորհրդային Հայաստան» (Երեւան), 16 Օգոստոս 1940, թիւ 190 : Հմմտ. նոյնտեղ («Սովետական Հայաստան»), 14 Դեկտ. 1940, թիւ 287 :

<sup>5</sup> Պաշ. Աբովեանի Երկերը (Մոսկուա 1897), էջ 25, 26 :

<sup>6</sup> «Տեղեկագիր Հ. Պ. Ս. Հ. Գիտութեան եւ Արուեստի Ինստիտուտի», թիւ Գ (Երեւան 1928), էջ 121, 124, 133, 154 :

<sup>7</sup> Տե՛ս վարը, էջ 19 :

<sup>8</sup> Հմմտ. նաեւ «Ս. Նազարեանցի Նամակները Պ. Աբովեանին», «Մուրճ», ամսագիր (Թիֆլիս) 1904, թիւ 1, 2, 3 :

նօթ էր — հարկաւ որպէս ուսանող — համալսարանի վարչութեանը: Նոյն այդ բանը հաստատում են նաեւ դերման գիտուն ճամբորդներ Մորից Վադներ, Բարոն Աուզուստ Փոն Հաքստհաուզէն, Ֆրիդրիխ Բողենշտէդ եւ Հերման Աբիխ, որոնք 1840ական թուականներին Հայաստան այցելած են ուսումնասիրական նպատակով եւ որոնց բոլորի ուղեկիցը, թարգմանը եւ գործակիցը եղած է Աբովեան: Հարկաւ, իրենց տեղեկութիւնները նրանք քաղած պէտք է լինին բուն իսկ աղբիւրից՝ Աբովեանից: Հայ գրական շրջանակները եւս տարբեր կարծիքի չեն եղած, տասնամեակներ շարունակ, Աբովեանի մասին:

Եթէ ուրեմն Սաչատուր Աբովեանի անունը արձանագրուած չենք գտնում Գորպատի համալսարանի Album Academicumի մէջ եւ դիւանական այլ գործերում, այդ դեռ չի նշանակում, թէ նա առհասարակ ուսանող չէ եղած Գորպատի համալսարանում<sup>9</sup>: Այդ նշանակում է միայն, իմ կարծիքով, որ Աբովեան չէ եղած Գորպատի համալսարանի արձանագրուած ուսանող: Այս մէկը կասկածից վեր պէտք է համարել: Վասն զի, Album Academicumը պարունակում է, ժամանակադրական կարգով ու անթերի կերպով, բոլոր արձանագրուած ու-

<sup>9</sup> Տես Ե. Շահազիզի աշխատութիւնը «Տեղեկագիր Հ. Ս. Ս. Հ. Գիտութեան եւ Արուեստի Ինստիտուտ»ի մէջ (Գիրք Գ):

սանսոզների ցանկը : Վերջիններիս թւում են եղած, օրինակ, քառասուն հայ ուսանողներ (1835—1889 թ.) ու առաջին հերթին՝ Ստեփան Նաղարեանց : Album Academicumի — եւ այլ կարգի վաւերացութեան — մէջ չէ արձանագրուած, ի դէպ, ոչ միայն Խաչատուր Աբովեանի անունը, այլ եւ անունները մի շարք ուրիշ՝ հետազային յայտնի դարձած հայերի, որոնց կենսագրութիւնից մեզ նայնպէս յայտնի է, որ դրանք եւս երկար կամ կարճ ժամանակով ուսանող եղած են Դորպատի համալսարանում — Ռափայէլ Պատկանեան, Գէորգ Բարխուդարեան եւ ուրիշներ :

Հասկանալի է թէ ինչո՛ւ : Որպէս իսկական, արձանագրուած ուսանող (immatriculierter Student) համալսարան ընդունուելու համար՝ պահանջուում էր դիմնագրիական լրիւ դասընթացն աւարտած լինելու վկայագիր : Աւելի՛ն, Դորպատի համալսարանի 1821 թ. կանոնագրութեան համաձայն՝ մինչեւ իսկ դիմնագրաւարտները եւ կամ այսպէս կոչուած հասունութեան վկայագիր (Reifezeugnis) ունեցողները պարտաւոր էին, համալսարան ընդունուելուց առաջ իսկ, պրոֆեսորներից բաղկացած մի առանձին յանձնաժողովի քով վերստուգիչ քննութեանց ենթարկուելի : Արդ, յայտնի է որ Խաչատուր Աբովեան (ինչպէս նաեւ Ռափ. Պատկանեան, Գ. Բարխուդարեան եւ ուրիշներ) չէ ունեցած դիմնագրայի — եւ կամ ո եւ է լրիւ միջ-

նակարդ վարժարանի — աւարտման վկայա-  
կան, նա դուրս էր եկած Թիֆլիսի Ներսի-  
սեան Գալրոցի երրորդ դասարանից, չէր յա-  
ճախած մինչեւ իսկ նոյն վարժարանի նորա-  
բաց չորրորդ դասարանը: Պարզ է ուրեմն,  
որ Աբովեան չէ՛ր էլ կարող համալսարան ըն-  
դունուիլ որպէս իսկակա՛ն, արձանագրուած  
ուսանող:

Բայց քանի որ, միւս կողմից, կասկա-  
ծից դուրս է նաեւ այն փաստը, որ Խաչա-  
տուր Աբովեան (ինչպէս նաեւ Ռ. Պատկա-  
նեան, Գ. Բարխուդարեան եւ ուրիշներ)\* յի-  
րաւի՛ որ բարձրագոյն ուսում ստացած է  
Գորպատի համալսարանում, մնում է ուրեմն  
անել միակ հաւանական եւ ընդունելի են-  
թագրութիւնը. այն որ՝ նա (ինչպէս եւ վե-  
րոյիշեալները) Գորպատի համալսարանը յա-  
ճախած է որպէս ազատ ունկնդիր: Այլա-  
պէս, Աբովեան երբեք չէր թոյլ տայ իրեն  
սնդելու եւ ուրիշներն էլ չէին հաստատի  
այդ, թէ ինք ուսա՛ծ է Գորպատի համալսա-  
րանում: Եւ ազատ ունկնդրի հանդամանքը  
լիովին տալի՛ս էր նրան — եւ առհասարակ  
բոլորին — այդ իրաւունքը: Յայտնի է որ  
հետագային Գերմանիայի ու առհասարակ  
Եւրոպայի գանաղան բարձրագոյն դպրոց-  
ներ բազմաթիւ հայ երիտասարդներ յաճա-  
խած են որպէս սոսկական ազատ ունկնդիր-  
ներ, եւ այդ պարագան երբեք չէ արդեւած  
որ նրանք եւս դասուին ուսանողների՛  
շարքը: Այդպիսիներէից շատերը լրջօրէն հե-

տեւած են բարձրագոյն ուսմանց ու հետա-  
 դային, որպէս համալսարանական անձեր,  
 անուն հանած գրական, կրթական եւ հան-  
 րային այլ ասպարէզներում: Դրանցից մէկը  
 եւ առաջինն է եղած ահա Խաչատուր Աբո-  
 վեան: Չունենալով գիմնադիայի եւ կամ  
 առհասարակ ո եւ է միջնակարգ դպրոցի ա-  
 ւարտման վկայական՝ նա բնականաբար չէ  
 էլ ընդունուած որպէս իսկական ուսանող:  
 Պարրոտի հովանաւորութիւնը եւ բարեկա-  
 մութիւնը չէ՛ր կարող նրան օգնել այդ բա-  
 նում ու խախտել տալ համալսարանի կանո-  
 նադրութիւնը: Աբովեան ժամանակ ու յար-  
 մարութիւն, ըստ երեւութին նաեւ նպատակ  
 չէ ունեցած նախապատրաստուելու՝ գիմնա-  
 դիայի աւարտման վկայական ձեռք բերելու  
 համար, որպէս զի կարողանայ ընդունուիլ  
 իսկական ուսանող: Այդ արել է օրինակ,  
 մենք դիտենք այժմ, Ստեփան Նազարեանց  
 (տե՛ս վարը): Ֆր. Պարրոտի եւ ուրիշ պրո-  
 ֆեսորների ու բարեկամների քով Աբովեան  
 դասեր առել է, այդ յայտնի է իր դորպա-  
 տեան Յիշատակարանից: Սակայն այդ դա-  
 սերը նպատակ են ունեցել միայն՝ լրացնելու  
 Աբովեանի ընդհանուր, միջնակարգ կրթու-  
 թեան եւ ուսման թերին: Այդ պարագան,  
 ինչպէս նաեւ Ֆր. Պարրոտի բարեկամու-  
 թիւնը եւ այլ կարգի նպաստաւոր պայման-  
 ներ թոյլատու են եղած, անտարակոյս, որ  
 Աբովեան այնուհետեւ համալսարան ընդու-  
 նուի որպէս ազատ ունկնդիր, լրջօրէն հե-

տեւի բարձրագոյն ուսմանց ու տարիներ յետոյ հայրենիք վերադառնայ՝ որպէս լրիւ համալսարանական կրթութեան տէր մի անձ :

✓ Ասածներից պարզ է, թէ ի՞նչպէս է որ Ս. Արուսեանի անունը յիշատակուած չենք գտնում Դորպատի համալսարանի Album Academicum-ի մէջ : Այդ տեղ, կրկնենք, առաջ են բերուած բուն իսկ, դիմնադիաւարտ ուսանողների անունները միայն : Բայց եւ այնպէս, սպասելի էր թերեւս, որ Ս. Արուսեանի եւ առհասարակ ազատ ունկնդիրների մասին եւս համալսարանի պաշտօնական թղթերի մէջ պահուած լինէին յիշատակութիւններ : Մեր պրպտուսները ցոյց տուին դժբախտաբար, որ Դորպատի համալսարանի գիւժանում 1822—1865 թ. առհասարակ վաւերաթուղթեր չեն պահուած ազատ ունկնդիրների վերաբերմամբ, իսկ մինչեւ 1821 թ., ու 1865 թ. յետոյ էլ, չա՛տ սակաւ :

Արուսեանի դորպատեան կեանքի վերաբերմամբ նկատուած թերին մի որոշ չափով լրացնում է նախ իր Յիշատակարանը : Եւ սակայն, այդտեղ եւս պակսում են ուղղակի, բացորոշ տեղեկութիւններ իր համալսարանական ուսմանց մասին <sup>10</sup> : Արուսեան մի աս մի անուանում է այն պրոֆեսորների եւ բարեկամների անունները, որոնք պարապել են

<sup>10</sup> Ս. Արուսեան Դորպատ եղած է 1830—1836 թ. : Անտարակոյս, նա հետեւած է փիլիսոփ. ֆակուլտետի բանասիրական-պատմական ենթաբաժնի ուսմանց :

իրենն հետ այս կամ այն առարկայից : Դրանց թուում են եղած՝ Ֆրիդրիխ Պարրոտ , Թէո-  
դոր Գրաս եւ ուրիշներ :

Այս պարագան առիթ տուաւ ինձ , որ Դորպատի համալսարանի դիւանում պահուած ու այդ անձերին վերաբերող վաւերաթուղթերն եւս աչքէ անցընեմ : Դժբախտաբար՝ դարձեալ ասպարդիւն : Նկատեմ այնուամենայնիւ , որ Ֆրիդրիխ Պարրոտի թղթածրարում գտայ յանուն համալսարանի վարիչի մի ձեռագիր գեկոյց , ուր երկիցս յիշատակուած է Սաչատուր Աբովեանի անունը : Եւ սակայն գեկոյցը , Դորպատ 25 Մարտ 1830 թ . թուակիր , ուրեմն եւ Աբովեանի այնտեղ գնալուց առա՛ջ , վերաբերում է Պարրոտի վերելքին գէպի Մասիսի դադաթը : Այդ վերելքին , յայտնի է , իր խիստ օգտակար մասնակցութիւնն է բերած Աբովեան ու ահա այդ պարագան է որ շեշտում է Պարրոտ իր գեկոյցի մէջ : Ապա , ասացինք արդէն , Ս . Նազարեանցի ուսանողական թղթածրարի մէջ պահուած մի գրութեան մէջ եւս յիշուած է Աբովեանի անունը (տես վարը , էջ 19) :

Մի երրորդ՝ ցարդ դարձեալ անձանօթ մնացած վաւերագրային յիշատակութիւն առաջ բերենք այժմ , որ կրկին վերաբերում է Աբովեանի դորպատեան կեանքին : Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսի օրհնութեան մի գիրն է այդ , 1833 թ . Ապրիլ 14 թուակիր , ուղղուած Դորպատ՝ յանուն Ֆրիդրիխ Պար-

րոտի<sup>11</sup> : Այդ գրութեան մէջ ասուած է . «Թոյլ տուք մեզ յանձն առնել ի շնորհս հասարակախնամ գթութեան ձերոյ զտիրացու Խաչատուր Ապովեան զորդեակն Աթոռոյս սրբոյ՝ զբարերարեալն ի ձէնջ» : Աբովեանի զորոյատեան կեանքի մասին իր Յիշատակարանում<sup>12</sup> եւ այլ աղբիւրներում բազմաթիւ ուրիշ տեղեկութիւններ կան պահուած , բարերախտարար : Մեր նպատակն էր՝ այստեղ առաջ բերել այն միայն , ինչ որ ձեռագիր վաւերագրութեան մէջ պահուած է ու ցարդ անձանօթ մնացած գիտութեան եւ Աբովեանի կենսագիրներին :

Այս կապակցութեան մէջ ասենք նաեւ , որ Աբովեանի կնոջ՝ Էմիլիա Լօօզէի մասին նմանապէս վաւերագրային տեղեկութիւն ձեռք բերինք Ռեւալի (Տալին) քաղաքային գիւղանում : Ինչպէս յայտնի է՝ Էմիլիա Լօօզէն Ռեւալցի էր ու գտնւում էր Թիֆլիսում , երբ նրա հետ ծանօթացաւ ու ամուսնացաւ (1839 թ .) Աբովեան : Հայրը եղած է արհեստով ատաղձագործ , անունը՝ Christian Loose : Աղջկայ ծննդեան տարին՝ 1818 թ . :

<sup>11</sup> Գրութիւնը պահուում է Ֆ . Պարրոտի թոռնուհիների մօտ : Գորպատից Բերլին վերադարձիս այցելեցի նրանց (Ռիդա) , որ սիրալիօրէն ցոյց տուին ինձ գրութիւնը : Այդ մասին մանրամասն՝ այլ առթիւ :

<sup>12</sup> Քաղուածարար առաջ բերուած Ներսէս Տէրկարասպետեանի «Ս . Աբովեան» կենսագր . աշխատութեան մէջ (Թիֆլիս 1897 , Բ . տպ . 1911) :

## Բ. ՍՏԵՓԵՆ ՆԱԳԱՐԵԱՆՑ

Դորպատի համալսարանի բուն իսկ՝ արձանագրուած առաջին հայ ուսանողը եղած է Ստեփան Նագարեանց: Ու նրա մասին, բարեբախտաբար, բաւական նիւթ կայ սլահուած համալսարանի դիւանում: Այդ նիւթերը բոլորովին նոր լոյս են սփռում Նագարեանցի ուսանողական կեանքի վրայ, ամենը ցարդ միանդամայն անյայտ մնացած են իր կենսադիրներին: Այլ աշխատութեան վերապահելով այդ նիւթերի լայն օղտագործումը եւ հրապարակումը, այստեղ առաջ կը բերենք էական կէտերը միայն:

Նախ ասեմ, որ Դորպատի գիմնազիայի — դարձեալ դերմանական — դիւանի դործերը պրպտելիս ինձ համար անսպասելի կերպով հանդիպեցի Ստեփանու Նագարեան անուանը: Այդ վարժարանի աշակերտական Արձանագրութեանց Մատեանի (Inskriptionsbuch) 1831—1862 թ. վերաբերեալ ձեռագիր հատորի մէջ, թիւ 1232ի տակ, նշանակուած է Ստեփանու Նագարեան: Իր մասին տրուած են հետեւեալ տեղեկութիւնները. հօր անունը՝ Եսայի քահանայ (մեռած), ծննդեան թուականը եւ տեղը՝ 15 Մայիս 1814, Թիֆլիս: Գիմնազիա (Գ. դասարան) ընդունուած է 4 Սեպտ. 1833 թ.: Դուրս է եկած (նոյն դասարանից) 8 Ապր. 1834 թ.:

Նագարեանց գիմնազիա մտած է, ի հարկէ, այն աւարտելու եւ այդպիսով, որպէս բուն իսկ, արձանագրուած ուսանող հա-



մալսարան ընդունուելու նախատակով : Ըստ  
երեւութին՝ շուտով միտքը փոխել է նա,  
կամեցել է աւելի առաջ մտնել համալսարան,  
ուստի եւ դուրս է եկել դիմնադիայից ու  
մասնաւոր ձեւով նախապատրաստուել՝ հա-  
մեմատարար կարճ ժամանակում, որպէս  
էքստերն հասունութեան վկայական ձեռք  
բերելու համար : Ու այդ յաջողուել է նրան,  
1835 թ. Յունիսին, համալսարանում տալով  
պահանջուած էքստերն քննութիւնը <sup>13</sup> :

Նադարեանց համալսարան ընդունուել է  
1835 թ. Յուլիս 29ին : Ուսանողական Album  
Academicumի (եւ ուրիշ թղթերի) մէջ իր  
անուան քով նշանակուած է 3483, որպէս  
արձանագրման (Immatrikulation) թիւ <sup>14</sup> :  
1835 թ. Յուլ. 29ից մինչեւ 1836 թ. Յու-  
նուար 18 նա եղած է stud. cam., այսինքն՝  
հետեւել է տնտեսական (կամերալ) գիտու-  
թեանց : Այնուհետեւ, մինչեւ նոյն թուականի  
(1836) Նոյեմբեր 16ը, եղած է stud. med.  
ուրեմն փոխել է ուսման ճիւղը ու հետեւել  
բժշկական գիտութեանց : Այդ ճիւղն եւս

<sup>13</sup> Այս եւ հետագայ տեղեկութիւնները քաղում  
ենք համալսարանի Գիւանի գործերից : Նկատենք եւ  
այն, որ դիմնադիայի աշակերտական Արձանագրու-  
թեանց Մատեանում նշանակուած է՝ Ստեփանոս Նա-  
զարեան, իսկ համալսարանի գործերում՝ Ստեփան Նա-  
զարեանց : Վերջինիս փոխարէն երբեմնապէս — մա-  
նուանդ սկիզբները — գրուած է՝ Նազարով :

<sup>14</sup> Այդ ցոյց է տալիս, որ համալսարանի հիմնա-  
դրութիւնից (1802 թ.) սկսած՝ Նազարեանց եղած է,  
ժամանակ կարգով, 3483րդ արձանագրուած ու-  
սանողը :

չուտով թողել է ու վերջնապէս անցել փիլի-  
սոփայական ֆակուլտետ, որպէս stud. phil.,  
1837 թ. սկզբից մինչեւ 1840 թ. ամառը,  
Եօթն կիսամեակ (սեմեստր), հետեւելով  
դիւստրապէս պատմական եւ բանասիրա-  
կան դիտութեանց :

Ս. Նաղարեանցի անունով Դորպատի  
համալսարանի դիւանում երկու «գործ» կամ  
թղթածրար (Acta) կան պահուած, մէկը՝  
Համալսարանի Խորհուրդի ու տեսչութեան,  
իսկ երկրորդը Փակուլտետի դործերում :  
Առաջինում պահուած թղթերը, ինչպէս որ  
ե՛ն առհասարակ, դիւստրապէս վարչական  
հանգամանք ունին, միւսները՝ ուսումնա-  
կան : Առաջին կարգի թուղթերից մէկից, որ  
կրում է համալսարանի հողաբարձու Քրաֆ-  
ստոնցոմի (Craffström) ստորագրութիւնը  
(Դորպատ, 13 Նոյ. 1836), իմանում ենք, որ  
Բարձրագոյն հրամանով Ս. Նաղարեանցին  
նշանակուել է տարեկան 500 ուերլի թոշակ  
պետական դանձարանից, մինչեւ համալսա-  
րանն աւարտելը :

Դրանից մի երկու ամիս առաջ (1836 թ.  
Սեպտ.) համալսարանին ներկայացրած խըն-  
դրագրի մէջ, ուր Նաղարեանց իր նիւթական  
ծանր կացութիւնն է նկարագրում ու պետա-  
կան թոշակ խնդրում, ուսումը շարունակել  
կարենալու համար, ասում է նա. «Իմ հայ-  
րենակից Աքովեանցի հետ, Դորպատ, ունե-  
ցած յաճախակի նամակագրութիւնս աւելի  
ու աւելի կենդանի դարձրեց իմ մէջ ցանկու-

թիւնը՝ որչափ կարելի է շուտ դալ Եւրոպա : Միանգամայն ողելորուած նրա տեղեկութիւններից՝ ես սիրտ արի, հակառակ իմ ծայր աստիճան աղքատիկ միջոցներիս, ճամբայ ելնել դէպի Գորպատ, ուր ես հարկադրուած էի, մի քանի տարի շարունակ, մի կերպ ապրել բարեկամներիս ընձեռած շատ աննշան նպաստներով» :

Փակուլտետի թղթածրարը վերաբերում է Նազարեանցի ուսման ընթացքին, նրա լսած առարկաներին, տուած քննութիւններին, ստացած վկայականներին եւ այլն : 1840 թ. Յունիս 3 թուակիր մի դրութեան մէջ Նազարեանց, ցանկութիւն յայտնելով աւարտական քննութիւն տալ, յիշատակում է համալսարանական այն դիտութիւնները, որ լսել է ինքը. այն է՝ Հին պատմութիւն, միջիտոփոյութեան պատմութիւն, ընդհանուր պատմութիւն, Հռոմէական գրականութեան պատմութիւն, Ռուս լեզուի եւ գրականութեան պատմութիւն, ընդհանուր Աշխարհագրութիւն եւ Ազգագրութիւն, յոյն եւ հռոմէական դասական հեղինակներ, ընդհանուր վիճակագրութիւն, Եւրոպայի աշխարհագրութիւն, Անդլիոյ եւ Թուրքիոյ պատմութիւն, Յունաստանի եւ Հռոմի հնախօսութիւն, Գերմանիոյ եւ Ռուսիոյ պատմութիւն» եւ այլն <sup>15</sup> : Բնականաբար յիշուած

<sup>15</sup> Մի երկու տեղեկութիւն էլ կայ Նազ.ի թղթածրարում այն մասին, թէ բժշկութեան ուսանող եղած միջոցին ինչ առարկաներ է լսել նա :

են եւ անուաններն այն պրոֆեսորներն, որոնց դասախօսութիւններին հետեւել է Նազարեանց :

Այդպիսով, եօթն կիսամեակ (1837 թ. սկզբից մինչեւ 1840 թ. ամառը) լրջօրէն հետեւելով վերոյիշեալ դիտութեանց, Նազարեանց տալիս է աւարտական քննութիւն<sup>16</sup> երկու նուազ, առարկաների մի մասից քննուելով 1840 թ. Օգոստ. 17ին, իսկ միւս մասից՝ նոյն թուականի Նոյեմբ. 12ին եւ յաջորդ օրերը: Նազարեանց «ընդհանուր առումով այնչափ յաջող տուաւ իր աւարտա-

<sup>16</sup> «Աւարտական քննութիւն տալ» ասելով հասկացում է համալսարանի տուեալ ճիւղի լրիւ դասընթացը վերջացրած եւ քննութեանց հետեւանքով ու սլատիան վկայադրի միջոցով այդ մասին վկայուած լինելու փաստը: Գորպատի համալսարանի սովորական աւարտական քննութիւնն էր՝ այսպէս կոչուած Gradualexamenը, վկայեալ ընթացաւարտի քննութիւնը, որ համալսարանաւարտին շնորհում էր «վկայեալ կամ պսակեալ ուսանող»ի տիտղոսը (die Würde eines graduierten Studenten), ուսերէն՝ «իսկական ուսանողի կոչում» (звание действительного студента) ու հնարաւորութիւն տալիս նրան՝ սկստական կամ հանրային ասպարէզում համապատասխան պաշտօն ձեռք բերել: Վերոյիշեալ՝ «վկայեալ ուսանող»ի տիտղոսից զատ էր «կանդիդատ»ի տիտղոսը, որ ձեռք էր բերում սովորաբար համալսարանին ներկայացուած եւ ընդունուած յատուկ աշխատութեան (գրաւոր) հիման վրայ: Գորպատի հայ համալսարանաւարտներից ոմանք միայն ձեռք են բերել ե՛ւ այդ վերջին կոչումը (օրինակ՝ Ս. Նազարեանց): Գարձեալ տարբեր էր՝ դոկտորական տիտղոսը: Մի քանի Հայեր, նախապէս ուսած լինելով այս կամ այն համալսարանի (մեծ մասով՝ Գերմանիա) լրիւ դասընթացը, ներկայացած են Գորպատի համալսարան ու քննութիւն տուած այնտեղ, ստանալու համար բժշկի կոչում, դոքտորական կամ այլ կարգի վկայական:

կան քննութիւնը» (Gradualexamen), ասուած է փիլիսոփայական Փակուլտետի դեկանի մի գրութեան մէջ (10 Դեկտ. 1840) յանուն համալսարանի ուսկառքի, «որ Փակուլտետը կարող եղաւ նրան ապահովել կանդիդատի աստիճանը (Kandidatengrad), պայմանական կերպով»: Այս վերջին խօսքն էլ այն իմաստով պէտք էր հասկանալ, ինչպէս արդէն պարզուած է դեկանի մի ուրիշ գրութեան մէջ (13 Սեպտ. 1841 թ.), թէ Նաղարեանց դրա համար պէտք է համալսարանին ներկայացնէր մի գոհացուցիչ գրաւոր աշխատանք: Այդ պայմանը կատարում է Նաղարեանց ու բանաւոր յաջող քննութիւններից յետոյ եւս մի առ ժամանակ, մինչեւ 1840 թ. Դեկտ. 23, շարունակում է մնալ փիլիսոփայական Փակուլտետի ուսանողներին շարքում:

Փիլիսոփայական գիտութեանց կանդիդատի իր գրաւոր աշխատութիւնը Նաղարեանց ներկայացնում է 1841 թ. Յունիսի 2ին, որ եւ պրոֆեսորներին կողմից քննութեան ատնուելուց ու ընդունուելուց յետոյ հեղինակին նոյն թուի Սեպտ. 16ին տրւում է, արդէն պաշտօնական կերպով, վերոյիշեալ՝ «փիլիսոփայական գիտութիւնների կանդիդատ» տիտղոսը: Բարեբախտաբար, Նաղարեանի թղթածրարում պահուած է իր գրաւոր աշխատութիւնը, որ հեղինակուած է

լատիներէն լեզուով ու կրում է «Sparta et Athenae bello Peloponesiaco» վերնագիրը<sup>17</sup> :

Աւելցնենք նաեւ, որ Ս. Նաղարեանցի թղթածրարում պահուած է, ի միջի այլոց, նրա բանաւոր քննութեանց արդիւնք հանդիսացող աւարտական վկայագրի պատճէնը եւս, ուր մի առ մի յիշատակուած են ոչ միայն այն առարկաները, որոնցից քննուել է նա, այլ եւ՝ քննող պրոֆեսորների անունները ու այն դնահատականները (մեծ մասով gut = լաւ), որ տրուել են նրան՝ մէկ կամ միւս առարկայի քննութեան արդիւնքի մասին: Այդ առարկաները դրեթէ նոյնն են, ինչ որ յիշեցինք վերը, քննող պրոֆեսորները՝ Neue, Kruse, Blum, Rosberg, Preller եւ այլն: Վերջապէս, Նաղարեանցի թղթածրարի մէջ պահուած մի բժշկական վկայաթուղթից խմանում ենք, որ նա իր ուսանողութեան վերջերը շատ լրջօրէն ու երկար ժամանակով հիւանդացած է եղել եւ արիւն թքել:

<sup>17</sup> Ս. Նաղարեանցի այդ՝ միանգամայն անյայտ մնացած աշխատութեան, ինչպէս նաեւ նրա աւարտման վկայագրի ու կարեւորագոյն թուղթերի լուսահանումները (Photokopie) հողացի Գորպատ կղած ժամանակս ու հետս բերի, այլ եւ ընդօրինակումներ ու քաղուածքներ՝ նրա միւս թղթերից: Հողացի նաեւ Գ. Գոգոխեանցի ու մի քանի ուրիշների կարեւորագոյն թուղթերի լուսահանումները, ինչպէս եւ ընդօրինակումներ ու քաղուածքներ՝ բոլոր հայ դորպատեանների ու յարակից թուղթերից:

## Գ. ՄԻԻՍ ՀԱՅ ԳՈՐԳԱՏԵԱՆՆԵՐԸ

(ՔԵՐՈՎՔԷ ԳԱՏԿԱՆԵԱՆՑ, ԳԵՈՐԳ ԴԵԳՈՒՅԵԱՆՑ,  
ՊԵՏՐՈՍ ՍԻՄԷՈՆԵԱՆՑ ԵՒ ԱՅԼՔ)

Մեր խօսքը վերաբերում է ուրեմն, խա-  
չատուր Աբովեանից զատ, Գորգատի հա-  
մալսարանի արձանագրուած՝ հայ ուսանող-  
ներին: Այլ եւ, Գորգատի համալսարան ա-  
սելով՝ այս կապակցութեան մէջ հասկանում  
ենք նրա միայն գերմանակա՛ն շրջանը, որ  
տեւեց մինչեւ 1889 թուականը, իսկ այնու-  
հետեւ ռուսացման ենթարկուեցաւ: Առա-  
ջին՝ դերմանական շրջանին են այդ համալ-  
սարանը յաճախել ու իրենց բարձրագոյն ու-  
սումքը եւ դերման-եւրոպական կրթութիւնն  
առել արեւելահայ կեանքի ու զրականու-  
թեան ռահիրաներից շատերը, իրենց գլուխ  
ունենալով Խաչատուր Աբովեանը: Տեսանք՝  
Գորգատի համալսարանի առաջին արձանա-  
գրուած հայ ուսանողն է եղած՝ Ստեփան  
Նազարեանց, Աբովեանի դպրոցական ընկերը  
ու սրտակից բարեկամը: Ապա եկել են մի  
շարք ուրիշներ, ոմանք՝ Աբովեանի նախկին  
աշակերտներ: Արձանագրուած այդ հայ ու-  
սանողների թիւը եղած է, Նազարեանցից  
սկսած, 1835—1889, քառասուն: Դրանց ա-  
մենի մասին աւելի կամ պակաս չափով նիւ-  
թեր կան պահուած Գորգատի համալսարանի  
դիւանում<sup>18</sup>, բայց ո՛չ նաեւ, դժբախտա-

<sup>18</sup> Որոշ նիւթեր կան համալսարանի (Գորգատի)  
դոկտորական քննութեանց ներկայացած Հայերի մա-  
սին եւս, որոնց անունները կը թուենք վերջը:

բար, ազատ ունկնդիրները: Այս էլ ասենք, որ 1889 թուականից յետոյ եւս, ուսական շրջանում, զգալի թուով հայ ուսանողներ յաճախած են Դորպատի համալսարանը: Եւ սակայն, քիչ բացառութեամբ, զրանք աչքի ընկնող դեր չեն խաղացած հայ գրական կամ հանրային կեանքում: Մեզ հետաքրքրողը սւրեմն Դորպատի համալսարանի գերմանական շրջանն է:

1. Դորպատի համալսարանի արձանագրուած մէկ քառասնեակ հայ ուսանողներից (1835—1889 թ.) առաջինն՝ Ս. Նազարեանցի խօսքն արինք արդէն: Այժմ յիշատակենք միւսների անունները՝ ժամանակագրական կարգով: Նկատենք սկզբից, որ քառասուն հայ դորպատեանները ո՛չ ամենը աւարտել են համալսարանի այս կամ այն ճիւղը, շատերը միայն կարճ ժամանակ հետեւած են նրա դասընթացներին, յետոյ իրենց ուսումը շարունակած են ա՛յլ տեղ եւ կամ ընդհատել են այն: Հայ դորպատեաններից ոմանց անունները ծանօթ են ներկայ սերունդին եւս: Միւսները, մեծ մասով, դարձեալ ազգային-հանրային անուանի դործիչներ եղած են ժամանակին:

Ս. Նազարեանցից յետոյ, բաւական ժամանակ, ո՛չ մի հայ ուսանող չէ եղած Դորպատում: Հետեւում է՝

2. Քրիստափոր Աւագեանց: Ծն. 9 Մայիսի 1815 թ. Նոր-Նախիջևան: Դորպատ է եղած կազանի համալսարանի երրորդ

Կուրսից (Երրորդ տարուան դասընթաց) :  
1844—1850 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս բժշկութեան ուսանող :  
Աւարտական քննութիւնն <sup>19</sup> չէ տուած :

3. Գէորգ Ափխեանց, Սաչատուր Աբովեանի նախկին աշակերտ, նրա մտերիմ բարեկամներէից մին : Ծն. 20 Յուլ. 1829 թ. Թիֆլիս : 1848—1852 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս բնագիտութեան ուսանող : Աւարտական քննութիւնն չէ տուած :

4. Գաբրիէլ Խատիսեան, Սաչ. Աբովեանի աշակերտներէից : Դպրոցական, դրական-դիտական եւ հանրային ծանօթ դործիչ : Ծն. 29 Փետր. 1831 թ. Թիֆլիս : Նախապէս աւարտած է Մոսկուայի Լազարեան ճեմարանը ու յաճախած այնտեղի համալսարանը (1847—1848), ապա, 1848—1851 թ., Դորպատի համալսարանը, հետեւելով ֆիւիաբանութեան ճիւղին : Տուել է աւարտական քննութիւն, ստացել վկայեալ ընթացաւարտի տիտղոս ու արժանացել «Փրոլիկօ-մաթեմատիկական Փակուլտետի կանդիդատ»ի աստիճանին :

5. Գրիգոր Աղափիրեանց, հետադային էջմիածնի եպիսկոպոս : Ծն. 26 Յունիսի 1827 թ. Աստրախան : Դորպատ է եկած Մոսկուայի Լազարեան ճեմարանից : 1849—1851 թ. յաճախած է Դորպատի համալսարանը :

<sup>19</sup> Հմմտ. վերը՝ ծանօթ. 16 :

րանը որպէս տնտեսական դիտութեանց ուսանող : Աւարտական քննութիւն չէ տուած :

6. Գէորգ (Եգոր) Միրիմանեանց : Ծն . 10 Սեպտ . 1831 թ . Թիֆլիս : Լազարեան ճեմարանից է եկած Գորպատ , ուր եւ 1849—1853 թ . եղած է տնտեսական դիտութեանց ուսանող : Աւարտական քննութիւն չէ տուած :

7. Համբարձում Փափագեանց : Ծն . 26 Հոկտ . 1830 թ . Կոստանդնուպոլիս : Գորպատ է եկած Լազարեան ճեմարանից : 1849—1851 թ . յաճախած է Գորպատի համալսարանը որպէս տնտեսական դիտութեանց ուսանող : Աւարտական քննութիւն չէ տուած :

8. Մարկիան Ռօտինեանց : Բժիշկ : Ծն . 20 Դեկտ . 1830 թ . Թիֆլիս : Գորպատ է եկած Լազարեան ճեմարանից : 1850 թ . կէս տարի ուսած է բնագիտութիւն (Ֆիզիկ) , այնուհետեւ , մինչեւ 1854 թ . , բժշկութիւն : 1855 թ . ձեռք է բերած բժշկական դիպլոմ :

9. Պետրոս Սիմէոնեաց , հետադային հանրային-դպրոցական ծանօթ դէմք , խմբադիր «Մեղու Հայաստանի» օրաթերթի (Թիֆլիս) : Ծն . 3 Դեկտ . 1830 թ . Նոր-Նախիջեան : Գորպատ է եկած Լազարեան ճեմարանից : 1851—1853 թ . յաճախած է Գորպատի համալսարան որպէս տնտեսական դիտութեանց ուսանող : Աւարտական քննութիւն չէ տուած :

10. Քերովբէ Պատկանեան , հետադային ծանօթ հայադէտ եւ արեւելադէտ , ուսուց-

չապետ Պետերբուրգի համալսարանի : Ծն . 4 Մայիսի 1833 թ . Նոր-Նախիջևան : Դորպատ է եկած Լազարեան ճեմարանից : 1851—1852 թ . յաճախած է այնտեղի համալսարանը , հետեւելով տնտեսական գիտութեանց : Աւարտական քննութիւնն չէ տուած (Դորպատում) :

11 . Միֆայէլ Փրիդոնեանց : Ծն . 15 Մարտի 1829 թ . Թիֆլիս : Դորպատ եկած՝ Լազարեան ճեմարանից : 1851—1855 թ . յաճախած Դորպատի համալսարանը որպէս տնտեսական գիտութեանց ուսանող : Աւարտական քննութիւնն չէ տուած :

12 . Յակոբ Տէր-Միֆայէլեանց : Ծն . 5 Հոկտ . 1829 թ . Թիֆլիս : Դորպատ եկած՝ Թիֆլիսի գիմնադրայից : 1851—1852 թ . յաճախած է Դորպատի համալսարանն որպէս տնտեսական գիտութեանց ուսանող : Աւարտական քննութիւնն չէ տուած :

13 . Գէորգ Դոդոխեանց , հեղինակը հանրածանօթ «Ծիծեռնակ» երգի , որ գրուած է Դորպատում : Ինչպէս Ստեփան Նազարեանցի , այնպէս եւ Գէորգ Դոդոխեանցի մասին բաւական տեղեկութիւն է սլահուած Դորպատի համալսարանի գիւանում , ուր երկու թղթածրար կան նրա անունով , մէկը համալսարանի Խորհուրդի եւ տեսչութեան , միւսը՝ Փակուլտետի գործերում : Այստեղ առաջ բերենք ամենակարեւոր տեղեկութիւնները Դոդոխեանցի ուսանողական կեանքից :

Գողոթեանց ծնած է 18 Փետր. 1831 թ. Սիմֆերոպոլ (Ղրիմ) : Աւարտած է Մսկուայի Լադարեան ձեմարանը : 1852 թ. Յուսուարին մտած է Գորպատի համալսարան : Նախ հետեւած է տնտեսական դիտութեանց (Ֆիզ. - մաթեմ. Փակ.), ապա, նոյն թուականի Յուլիսից սկսած՝ այսպէս կոչուած դիւանագիտական ուսմանց (Diplomatie) ճիւղին (իրաւաբ. փակուլտետ) : Ուսումնս ընդհատած է 1855 թ.ի Դեկտ. 19ին. որոչ է՝ հիւանդութեան պատճառով : 1854 թ. Հոկտ. 8 թուակիր բժշկական մի վկայաթուղթի մէջ կարդում ենք, որ Գողոթեանց այդ թուականի առաջին կիսամեակի ընթացքում տառապել է աչքերի բորբոքումով. բժիշկը արդելել է նրան աշխատանքը : Բայց եւ այնպէս, տեղեկանում ենք, Գողոթեան նոյն այդ 1854 թուականի Դեկտ. 7ին յաջողապէս տուել է աւարտական քննութեանց առաջին մասը : Յետոյ եւս տառապել է հիւանդութեամբ :

1858 թ. Դեկտ. 3ին Գողոթեանց նորէն մտել է համալսարան (իրաւաբ. Փակ.) : 1859 թ. Դեկտ. 11ին տուել է աւարտական քննութեանց երկրորդ մասը ու ձեռք բերել «դիւանագիտական ուսմանց վկայեալ ուսանող»ի աստիճան (die Würde eines graduierten Studenten der diplomatischen Wissenschaften), այդ մասին համալսարանից ստանալով համապատասխան վկայադիր, որի պատճէնը պահուած է իր թղթածրարում :

Վերջինիս մէջ մնացած կան նաեւ ուրիշ գրութիւններ, դրանց թւում եւ մի նամակ՝ Աղաթօն Աքիմեանցից, Ս. Պետերբուրգ, 20 Յունիսի 1852 թ. թուակիր, ուղղուած Գէորգ Գողոթեանցին ու վերջինիս ուսումնակից Վ. Ասկարեանցին: Նամակը ունի յորդորական բնոյթ:

14. Իսահակ Տէր-Պետրոսեանց: Ծն. 10 Մարտի 1827 թ. Թիֆլիս: 1852 թ. Յունուար 19ին մտած է Գորգատի համալսարան որպէս տնտեսական գիտութեանց (Ֆիզ. - մաթեմ. Փակ.) ուսանող: Մէկ եւ կէս տարի յետոյ փոխել է ուսման ճիւղը ու գրուել (Յուլիս 1853 թ.) բժշկութեան ուսանող: 1856 թ. Հոկտեմբ. 16ին թողած է համալսարանը: Աւարտական քննութիւն չէ տուած:

15. Աղէքսանդր Ռօտինեանց: Ծն. 10 Դեկտեմբ. 1832 թ. Թիֆլիս: Մասկուայի Լազարեան ճեմարանից է եկած Գորգատ, ուր եւ 1852 թ. Յունուարից մինչեւ 1855 թ. վերջը հետեւած է տնտեսական գիտութեանց (Ֆիզ. - մաթեմ. Փակ.): Աւարտական քննութիւն տուած է եւ 1856 թ. Մայիս 10ին ստացած է վկայագիր, արժանանալով «կանդիդատ Ֆիզիկո - մաթեմատիկական գիտութեանց»<sup>20</sup>

<sup>20</sup> Մինչեւ 1850 թ. Գորգատի համալսարանի փլիսոփայական ֆակուլտետը ունէր հետեւեալ ենթաբաժինները. 1. փիլիսոփայական եւ մաթեմատ. գիտութեանց, 2. բնագիտական, 3. բանասիրական (Ֆիլոլոգիական) - սրտամական, 4. արհեստագիտական (տեխնոլոգիական) տնտեսական գիտութեանց ենթաբաժիններ: 1850 թ. փիլիսոփ. ֆակուլտետը բաժա-

տխտղոսին : Գրած ունի Յիշողութիւններ  
Դորպատի հայ ուսանողութեան մասին :

16. Վահան Ասկարեանց : Ծն. 7 Նոյ.  
1830 թ. Վաղարշապատ : Լաղարեան ճեմա-  
րանից (աւարտած) եղած Դորպատ, 1853 թ.  
Յունուարին մտնելով տեղւոյն համալսարանի  
իրաւաբ. փակուլտետը եւ մինչեւ Յուլիս  
հետեւելով դիւանագիտական ուսմանց :  
Սյնուհետեւ, մինչեւ 1857 թ. Օդոսսոս, հե-  
տեւած է տնտեսական դիտութեանց : Թղթե-  
րից երեւում է, որ աւարտական քննու-  
թիւն (տնտեսական դիտութեանց) տուած է  
(16 Դեկտ. 1857) եւ կանդիդատի աստիճան  
տուած : Իր թղթածրարի մէջ չէ պահուած  
սակայն բուն իսկ վկայականի պատճէնը կամ  
ո եւ է դրաւոր աշխատութիւն : Մեռած է  
Դորպատում (15 Յունուարի 1858 թ.) ու  
թաղուած նոյնտեղ :

17. Նիկողայոս Շարոյեանց : Ծն. 20 Մարտի  
1833 թ. Թիֆլիս : Օդոսսոս. 1853 թ. մինչեւ  
Օդոսսոս. 1857 եղած է Դորպատի համալսա-  
րանի Փիլոսոֆիայի ֆակուլտետի ուսանող,  
հետեւելով տնտեսական դիտութեանց : Աւար-  
տական քննութիւն տուած է, ստանալով

---

նուել է երկու ինքնուրոյն փակուլտետների. I. պատ-  
մա-բանասիրական եւ II. փիլիսոփայութեամբ. ֆա-  
կուլտետներ : Իր հերթին՝ պատմա-բանասիրական  
Փակուլտետը ունեցել է այնուհետեւ հետեւեալ երկու  
ենթարաժինները. 1. փիլիսոփայութեամբ. եւ 2. բանա-  
սիրական-պատմական, իսկ Փիլոսոֆիայի ֆակուլ-  
տետը՝ 1. բնական դիտութեանց եւ 2. արհեստագիտա-  
կան- (տեխնոլոգ.) տնտեսական ենթարաժին :

1858 թ. Յունուար 25 թուակիր աւարտման վկայագիր ու ձեռք բերելով «Փիղիկօ-մաթեմ. գիտութեանց վկայեալ ուսանող» ի տխուր :

18. Ֆիրգուլ Նագարբէգեանց : Ծն. 13 Փետր. 1832 թ. Թիֆլիս : Մոսկուայի Լազարեան ձեմարանից է եկած Գորպատ ու այնտեղի համալսարանում 1854 թ. Յունուար մինչև 1855 թ. Յուլիս տնտեսական գիտութեանց հետեւած, իսկ Յուլ. 1855 մինչև Փետր. 1861 թ. (ընդհատումներով) — բժշկական գիտութեան : Մեռած է չուտով նոյնտեղ : Թղթերից երեւում է, որ Ֆ. Նագարբէգեանց թէև աւարտական քննութեանց մէկ մասն է միայն տուած եղել, բայց գիտուել է որպէս համալսարանն աւարտած :

19. Իշխան Միֆայէլ Ամատունի : Ծն. 16 Հոկտ. 1834 թ. Թիֆլիս : Մոսկուայի համալսարանից է եկած Գորպատ, ուր եւ Յունուար 1856 մինչև Յունուար 1859 թ. (ընդհատումով) հետեւած է դիւանագիտական ուսմանց (իրաւադ. Փակուլտետ) : Աւարտական քննութիւն տուած է եւ 1859 թ. Մայիսին ստացած վկայագիր, արժանանալով «կանդիդատ դիւանագիտական ուսմանց» տխուրսին : Այդ նպատակով դրած է աշխատութիւն՝ «Օրդին Նաչչոկին, Ռուսաստանի ամենանշանաւոր դիւանագէտը 17րդ դարում» վերնադրով, որ ամփոփուած է 186 էջնոց մի տետրակի մէջ ու պահւում է իր թղթածրարում :

20. Բաղդասար Սվէշնիկեանց : Ծն . 20 Յունուարի 1841 թ . Թիֆլիս : Օգոստոս 1860 թ . մինչեւ Յուլիս 1861 թ . ուսած է Դորպատի համալսարանում , հետեւելով տնտեսական գիտութեանց : Աւարտական քննութիւնն չէ տուած :

21. Մատթիաս Հախումեանց : Ծն . 16 Մայիսի 1841 թ . Շուշի : Օգոստոս 1860 թ . մինչեւ Յուլիս 1861 թ . եղած է ուսանող Դորպատի համալսարանի , հետեւելով բնագիտութեան (Փիզիկ) : Աւարտական քննութիւնն չէ տուած Դորպատում :

22. Յովհաննէս Տէր-Միֆայէլեանց : Ծն . 30 Յունուարի 1843 թ . Թիֆլիս : Օգոստոս 1860 թ . մինչեւ Սեպտ . 1861 թ . հետեւած է տնտեսական գիտութեանց Դորպատի համալսարանում : Աւարտական քննութիւնն չէ տուած :

23. Գրիգոր Մարգարեանց : Ծն . 19 Յունիսի 1843 թ . Նուխի : Օգոստոս 1860 թ . մինչեւ Յուլիս 1861 թ . ուսանող եղած է Դորպատում , հետեւելով տնտեսական <sup>21</sup> (գիւղատնտեսական) գիտութեանց : Աւարտական քննութիւնն չէ տուած :

<sup>21</sup> Տնտեսական գիտութեանց մէջ էր մտնում եւ գիւղատնտեսութիւնը : Հայ ուսանողներին ոմանք հետեւած են մասնաւորապէս այդ՝ գիւղատնտեսական գիտութիւններին : Տնտեսական կամ՝ աւելի ճիշտը՝ պետատնտեսագիտական (կամերալ) ուսմանց հետեւող ուսանողները նախապատրաստուած էին առաւելապէս պետական – հանրային ծառայութեան մէջ մտնելու , որպէս մասնագէտ :

24. ԳՈՒՍՏԱԼ ՔԱՂԱՆՔԱՐԵԱՆԿ : ԾՆ .  
17 ՅՈՒՆՈՒՆԱՐԻ 1843 թ . ԵՐԵՎԱՆ : ՕՂՈՍԱՌՈՍ  
1860 թ . մինչև ՍԵՊՏԵՄԲԵՐ 1861 թ . ուսած  
է ԴՈՐԱԿԱՏԻ ՀԱՄԱՂՍԱՐԱՆՈՒՄ , ՀԵՏԵԼԵՂՈՎ  
տնտեսական գիտութեանց : Աւարտական  
քննութիւն չէ տուած :

25. ԱԼԵԲԱՆԻՂՐ ՂՈՐՂԱՆԵԱՆԿ : ԾՆ .  
24 ՅՈՒՆԻՍԻ 1842 թ . ԹԻՓԼԻՍ : ՅՈՒՆՈՒՆԱՐ  
1861 թ . մինչև ՅՈՒՆԻՍ 1861 թ . ԵՂԱԾ Է ու-  
սանող ԴՈՐԱԿԱՏԻ ՀԱՄԱՂՍԱՐԱՆԻ , ՀԵՏԵԼԵՂՈՎ  
տնտեսական (գիւղատնտեսական) գիտու-  
թեանց : Աւարտական քննութիւն տուած է  
յետոյ , ձեռք բերելով «կանդիդատ գիւ-  
ղատնտեսական գիտութեանց» տիտղոսը  
(1866 թ . Նոյ . 23) :

26. ՎԱՐՂԱՆ ԱՔՈՎԵԱՆ , ՈՐՂԻՆ ԽԱՀԱ-  
ՍՈՒՐ ԱՔՈՎԵԱՆԻ : ԾՆ . 31 ՄԱՅԻՍԻ 1840 թ .  
ԹԻՓԼԻՍ : ՅՈՒՆՈՒՆԱՐ 1861 թ . մինչև ԱՍՐԻՆ  
1862 թ . ուսած է ԴՈՐԱԿԱՏԻ ՀԱՄԱՂՍԱՐԱ-  
ՆՈՒՄ , ՀԵՏԵԼԵՂՈՎ տնտեսական գիտութեանց :  
Աւարտական քննութիւն չէ տուած : Քննուած  
է սակայն ՀԱՄԱՂՍԱՐԱՆՈՒՄ ու ձեռք բերած  
(1864 թ . Ասր . 29) ոուս լեզուի կրտսեր ու-  
սուցչի վկայական : Եղած է սկիզբը ուսու-  
ցիչ Փալլին (Կստոնիա) , յետոյ Կովկաս տե-  
ղափոխուած է : Իր կեանքի վերջին տա-  
րիները ուսուցիչ էր Էջմիածնի ձեմարանի  
ղասարանական բաժնում : Մեռաւ ու թա-  
ղուեցաւ Վաղարշապատ (1896) :

27. ՄԻԲԱՅԷՂ ՂԱԳԱՐԵԱՆԿ : ԾՆ . 15 ՅՈՒ-  
ՆԻՍԻ 1843 թ . ԹԻՓԼԻՍ : ՓԵՏՐ . 1861 թ . մին-

չեւ Մարտ 1866 թ. ուսանող Դորպատի համալսարանի եւ հետեւած տնտեսական (գիւղատնտես.) գիտութեանց : Աւարտական քննութիւն տուած է ու ձեռք բերած «կանդիդատ գիւղատնտեսական գիտութեանց» տիտղոսը (12 Սեպտ. 1867 թ.) :

28. Յարուքիւն (Արտեմ) Տէր-Յովակիմեանց : Ծն. 6 Նոյ. 1840 թ. Երեւան : Փետրուար 1861 թ. մինչեւ Նոյեմբեր նոյն թուականի եղած է ուսանող Դորպատի համալսարանի, հետեւելով տնտեսական (գիւղատնտես.) գիտութեանց : Աւարտական քննութիւն չէ տուած :

29. Լեւոն Տիգրանեանց : Ծն. 19 Նոյեմբեր 1842 թ. Երեւան : Ներկայացրել է Դորպատի գիմնազիայի հասունութեան վկայական (Reifezeugnis), Յունուար 1866 թ. մինչեւ Նոյեմբեր նոյն թուականի հետեւելով Դորպատի համալսարանի տնտեսական գիտութեանց : Ընդհատած է այդտեղ ուսումը եւ, ինչպէս երեւում է թղթերից, այնուհետեւ շարունակած է Պետերբուրգի բժշկավիրաբուժական Ակադեմիայում : 1870 թ. Փետրուարին նորէն եկած է Դորպատ, ընդունուելով բժշկական Փակուլտետ : Շարունակած է մինչեւ 1875 թ. Ապրիլ ամիսը, ձեռք բերելով բժիշկի դիպլոմ : Հետագային երկար տարիներ դործել է որպէս բժիշկ : Ունի նաեւ գրած Յիշողութիւններ՝ Դորպատի համալսարանի հայ ուսանողութեան մասին :

30. Մովսէս Ազնաւուրեանց : Ծն . 1 Հոկտեմբեր 1841 թ. Շամախի : Բողոքական : Յունուար 1870 թ. մինչեւ Մայիս 1871 թ. եղած է Դորպատի համալսարանի աստուածաբանական Փակուլտետի ուսանող : Աւարտական քննութիւն տուած է եւ 1871 թ. Հոկտեմբեր 18ին ձեռք բերած «վկայեալ ուսանող աստուածաբանութեան» տիտղոսը :

31. Յովակիմ Զախմախսագեանց : Ծն . 17 Օգոստ . 1841 թ. Բագու : Բողոքական : Յունուար 1870 թ. մինչեւ Մայիս 1871 թ. եղած է Դորպատի համալսարանի աստուածաբանական Փակուլտետի ուսանող : Աւարտական քննութիւն տուած է եւ 1871 թ. Մայիս 31ին ձեռք բերած «վկայեալ ուսանող աստուածաբանութեան» տիտղոսը :

32. Մկրտիչ (Նիկիտա) Էդիլիսանեանց : Ծն . 15 Յուլ . 1849 թ. Աստրախան : Դորպատ եկած է Պետերբուրգի բժշկա-վիրաբուժական Ակադեմիայից : Հոկտ . 1870 թ. մինչեւ Հոկտեմբեր 1873 թ. եղած է Դորպատի համալսարանի բժշկական Փակուլտետի , իսկ 1876 թ. Օգոստ . 28ից մինչեւ նոյն տարուան Սեպտ . 1ը՝ իրաւագիտական Փակուլտետի ուսանող : Աւարտական քննութիւն չէ տուած :

33. Կարապետ Եակուլեանց : Ծն . 10 Յունուարի 1848 թ. Ղզլար : Դորպատ է եկած Պետերբուրգի բժշկա-վիրաբուժական Ակադեմիայից : 1871 թ. Յունուարից սկսած մինչեւ նոյն թուականի Սեպտեմբեր եղած է Դորպատի համալսարանի իրաւագիտական

Փակուլտետի ուսանող : Ըստ երեւութիւն ուսումը շարունակած է Պետերբուրգի համալսարանում :

34. Կարապետ Էդիլիսանեանց : Ծն. 7 Փետր. 1852 թ. Աստրախան : 1872 թ. Օդոսսոսին արձանագրուած է Դորպատի համալսարանի իրաւագիտական Փակուլտետի ուսանող, մնալով այնտեղ ընդամէնը մի քանի օր : Ընդունելութեան համար համալսարանին ներկայացրած է Դորպատի գիմնազիայի հասունութեան վկայագիրը (Reifezeugnis կամ Maturitätszeugnis) :

35. Միքայէլ Միրիմանեանց : Ծն. 10 Փետրուար 1853 թ. Թիֆլիս : Դորպատ է եկած, ըստ երեւութիւն, Լազարեան ճեմարանից : Թիֆլիսի դիմնագիայի վկայական է ներկայացրած ու 1874 թ. Օդոսսոսից մինչեւ 1875 թ. Օդոսսոս եղած է Դորպատի համալսարանի բժշկական Փակուլտետի ուսանող : Դորպատում քննութիւն չէ տուած :

36. Իսահակ Մայսուրեանց : Ծն. 22 Հոկտեմբեր 1854 թ. : Սովորած է Դորպատի գիմնազիայում ու աւարտած այն, ձեռք բերելով հասունութեան վկայական եւ այդ հիման վրայ ընդունուելով Դորպատի համալսարան, Յունուար 1875 թ. : Մէկ տարի քիմիաբանութիւն ուսանելուց յետոյ մտած է բժշկական Փակուլտետ, 1876 թ. Յունուարից սկսած մինչեւ 1882 թ. Սեպտեմբեր մնալով այդ բաժնի ուսանող : Գործերի մէջ թէեւ սյարդ հետք չկայ այն մասին, որ նա իր

աւարտական քննութիւնը Դորպատ տուած լինի, բայց որոշ պէտք է համարել այդ : Հետագային ծանօթ բժիշկ էր Թիֆլիսում, Սամսոն Մայսուրեանց անունով :

37. Սիմէոն Շահ-Ազիզ : Ծն. 1853 թ., Ալեքսանդրապոլ : Նախապէս սովորած է Երեւանի թեմական դպրոցում ու աւարտած այն : 1877 թ. Յունուարից մինչեւ Յունիսեղած է Դորպատի համալսարանի իրաւագիտական ֆակուլտետի ուսանող : Աւարտական քննութիւն չէ տուած :

38. Պօղոս Ալիփեանց : Ծն. 3 Օգոստոս 1862 թ. Գանձակ : Կաղանի համալսարանից է եկած Դորպատ, ուր ուսած է մաթեմատիկ, շատ կարճ ժամանակ միայն, Սեպտ. 1887 : Աւարտական քննութիւն չէ տուած : Album Academicumի մէջ նշանակուած է թէ համալսարանից էլած է (պաշտօնապէս) 1894ին միայն :

39. Փարսադան Տէր-Մովսէսեանց, հետագային մադիստրոս Մեսրոպ արքեպիսկոպոս, միաբան էջմիածնի : Ծն. 7 Մայիսի 1864 թ. Շիկահող (Զանգեզուր) : Դորպատի համալսարան է ընդունուած Ռեւալի (Էստոնիա) գիմնադիայի աւարտական վկայականի հիման վրայ : 1888 թ. Յունուարից սկսած մինչեւ 1891 թ. Դեկտ. եղած է ուսանող Դորպատի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետի : Աւարտական քննութիւն տուած է այդտեղ եւ ստացած ոսկէ մեդալ : Ներկայացրած է գիտական աշխատ

տութիւն Արդոնաւորդների արշաւանքի մասին ու ձեռք բերած «կանդիդատ դասական հին բանասիրութեան» տիտղոսը :

40. Լեւոն Օհանջանեանց : Ծն . 1 Դեկտ . 1864 թ . Ախալքալաք քաղաքում : Դորպատ եկած է Խարկովի համալսարանից : Օղոստոս 1888 մինչեւ Մարտ 1890 եւ այնուհետեւ (ընդհատումով) Սեպտեմբեր 1891 մինչեւ Դեկտեմբեր 1896 եղած է Դորպատի համալսարանի բժշկական Փակուլտետի ուսանող , աւարտելով այդտեղ իր ուսումը :

—

Առաջ բերենք այժմ ցանկը այն հայ երկտասարդների , որոնք իրենց համալսարանական ուսումը թէեւ Դորպատում չեն առած , այլ ուրիշ տեղեր , եւ սակայն՝ էֆստերն կերպով աւարտական քննութիւն են տուած (բացի մէկից) Դորպատի համալսարանում ու ձեռք բերած այդ մասին համապատասխան վկայագիր :

1. Աւետիֆ (Արտեմ) Թամամշեանց : Նախապէս ուսանող է եղած Պետերբուրգի համալսարանում , իսկ յետոյ՝ Մոսկուայի : Դորպատի համալսարանի Փիլիկո-մաթեմատ . Փակուլտետում տուած է աւարտական քննութիւն եւ 1868 թ . Հոկտ . Տին ձեռք բերած «կանդիդատ գիւղատնտեսութեան» տիտղոսը :

2. Անդրէաս Արծրունի , եղբայրը «Մ շակ» ի խմբագիր Գրիգոր Արծրունիի : Ծն . 27 Նոյ . 1847 թ . : Աւարտած Թիֆլիսի գիմնազիան ,

1864—1866 թ. ուսած Պետերբուրգի համալսարանում (Փիլիսոփայության ֆակուլտետ), յետոյ մէկ տարի՝ Վենետիկի Միսիթարեանց քով հայերէնի սլարապած : 1868—1873 թ. յաճախած է դերման համալսարաններ, հետեւելով բնագիտական ուսմանց : 1870 թ. ստացած է դոկտորական աստիճան Հայդելբերգի համալսարանից : 1873 թ. ներկայացած է Դորպատի համալսարան, քննութեամբ ձեռք բերելու համար հանքաբանութեան մագիստրոսի կոչումը : Թղթերից երեւում է, որ առաջին փորձից յետոյ՝ յետ է կեցել լիբրընական քննութիւնից : Անդրէաս Արծրունին հետադային ուսուցչապետի պաշտօն է վարել Աախէնի (Գերմանիա) տեխնիկական բարձրագոյն վարժարանում :

3. Մինաս Մկրտչեանց : Ծն. 11 Հոկտ. 1843 թ. Վերին-Ալուլիս : Բժշկութիւն ուսած Գերմանիայում : 1874 թ. Dr. med. Բերլինի համալսարանի : 1875 թ. Հոկտեմբերին Դորպատի համալսարանում տալով պահանջուած քննութիւնը ու ներկայացնելով զրաւոր աշխատանքներ՝ ձեռք է բերած «բժշկի իրաւունքներ» :

4. Պետրոս Արդուքիմսկի-Դուրբուկով : Ծն. 1850 թ. Թիֆլիս : Աւարտած է տեղւոյն գիմնազիան եւ 1871—1877 թ. բժշկութիւն ուսած Գերմանիոյ համալսարաններում : Dr. med. Հալէի համալսարանի (1877 թ.) : Դորպատի համալսարանում նա տուած է իր

բժշկական ակադեմիական քննութեանց առաջին մասը : Ուրիշ վկայութիւններ չկան :

5. Յակոբ Ադամեանց : Բժշկութիւն ուսած Գերմանիայում : Dr. med. Ենայի (Jena) համալսարանի : Դորպատի համալսարանում տուած է (Օգոստ. 1880 թ.) բժշկական ակադեմիական քննութեանց առաջին մասը : Ուրիշ վկայութիւններ չկան :

6. Գրիգոր Տէր-Գրիգորեանց : Աստրախանցի : 1872 թ. ակադեմիական է Պետերբուրգի բժշկա-վիրարութեան Ակադեմիան : 1882 թ. Դորպատի համալսարանում տուած է բժշկական ակադեմիական քննութեանց երկրորդ մասը, 1883 թ. ներկայացնելով դրաւոր շարադրութիւն (դիսերտացիա) : Ստացած է այդտեղ medicinae doctoris, բժշկութեան դոկտոր տիտղոսը :

7. Սրապիոն Աստուածատրեան : Նոր-Նախիջեւանցի : Ուսած է Գերմանիայում : 1885 թ. Dr. med. chir. Ենայի համալսարանի : 1889 թ. Դորպատի համալսարանում տուած է բժշկական ակադեմիական քննութեանց երկրորդ մասը, ներկայացնելով դրաւոր աշխատութիւններ : 1889 թ. Մայիս 22ին Դորպատի համալսարանից ստացած է բժշկիկոչում եւ աստիճան ու համապատասխան վկայագիր :

—

Թուեմբ նաեւ Դորպատի գիմնազիայի

(գերմանական) հայ աշակերտների անուաները (1833—1879 թ.) :

1. Ասացինք արդէն, որ Ստեփանոս Նագարեան սովորած է այնտեղ, 1833/34 թ. լինելով երրորդ դասարանի (tertia) աշակերտ (վերէն հաշուելով) :

2. Ղազար Ղազարեանց, Թիֆլիսեցի : 1852/53 թ. եղած է երրորդ դասարանի աշակերտ :

3. Ֆրիդրիխ (Եսայի) Նագարեանց (Նագարով), ծնած Կաղան : Որդին Ստեփան Նագարեանցի : 1857—1859 թ. սովորած է Դորպատի գիմնազիայում, լինելով է.—Դ. դասարանների աշակերտ :

4. Յովհաննէս (Իվան) Քալանթարեանց, ծնած Ղղար : 1860—1861 թ. եղած է աշակերտ Դորպատի գիմնազիայի :

5. Իսահակ Մայսուրեանց, Թիֆլիսեցի : 1870—1874 թ. եղած է Դորպատի գիմնազիայի Դ.—Ա. դասարանների աշակերտ : Աւարտելուց յետոյ յաճախած է, տեսանք արդէն, Դորպատի համալսարան :

6. Կոստանդին Ասիլեանց, Երեւանցի : 1873—1874 թ. եղած է Դորպատի գիմնազիոնի աշակերտ (է.—Զ. դաս.) :

7. Ալեքսանդր Մայսուրեանց, Թիֆլիսեցի : 1877 թ. մտած է Ե. դասարան :

Ապա, Դորպատի գիմնազիոնի աշակերտների ցանկի մէջ չեն մտած անուաները երկու Հայերի, որոնք ձեռք են բերած — ըստ երեւութիւն էֆստերն քննութիւն տալով —

այդ վարժարանի հասունութեան վկայագիր  
ու այդ հիման վրայ էլ ընդունուած համալ-  
սարան : Դրանք են՝

8. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԿ, որ գիմնադիայի  
(Դորպատ) հասունութեան վկայագիր ձեռք  
է բերած 1865 թ.

9. Կարապետ Էդիլիսանեանց, որ նոյն  
գիմնադիայի հասունութեան վկայագիր ձեռք  
է բերած 1872 թ. : Երկուքի մասին արդէն  
խօսք եղաւ վերը, ի շարս հայ դորպատեան-  
ների :

Ի վերջոյ յիշատակենք անունները երկու  
Հայորդիների, որ եղած են սաներ Դոր-  
պատի Ուսուցչական Սեմինարի (հիմնուած  
1828 թ. եւ փակուած 1889 թ.) : Ինչպէս  
Դորպատի համալսարանը եւ գիմնադիան,  
այդպէս եւ Ուսուցչական Սեմինարը<sup>22</sup> եղած  
է զուտ գերմանական հիմնարկութիւն :

<sup>22</sup> Պէտք չէ շփոթել այս դպրոցը՝ Դորպատի Ու-  
սուցչական Սեմինարը՝ նոյն տեղի համալսարանին կից  
1803 թ. հիմնուած «Ընդհանուր Ուսուցչական Ինստի-  
տուտ»ի հետ, որ իր գոյութեան երկրորդ շրջանում  
(1821 թ. յետոյ) վերակոչուել է «Մանկավարժական-  
Բանասիրական Սեմինար» ու փակուել 1856 թ. : Վեր-  
ջինս անբաժան մաս է կազմել համալսարանի, ունեցել  
է դիչերօթիկ ուսանողներ Դորպատի համալսարանից  
եւ վերջինիս սրոՖեսորներից բաղկացած մի տեսչու-  
թիւն է վարել այն : Գիչերօթիկ ուսանողները, պետա-  
կան թոշակառուներ, նախապատրաստուել են միջնա-  
կարգ վարժարանների ուսուցչութեան եւ կամ մանկա-  
վարժական այլ բարձր պաշտօնների համար : Ուսուցչա-  
կան Սեմինարը սովորական վարժապետանոց է եղած,  
միջնակարգ տիպի դպրոց, եւ նպատակ է ունեցել ու-  
սուցիչներ պատրաստելու ժողովրդական վարժարան-  
ների համար :

Ենթադրելով թէ Խաչատուր Աբովեան  
 դուրսէ ա՛յդ տեղ է յաճախել ու այդ իսկ պատ-  
 ճառով նրա անունը Ուսուցչական Սեմինարի  
 սաների ցանկի մէջ որոնելով, բայց չգտնե-  
 լով, ես հանդիպեցի այնտեղ երկու ուրիշ  
 հայ անունների՝ մինչ այն ինձ բոլորովին ան-  
 յայտ : Ահա դրանք .

1. Էմմանուէլ Փիրբուդադեանց : Ծն .  
 1846 թ . Շամախի մօտ դտնուող Զերդերան  
 դիւղում : Մէկ տարի միայն յաճախած է  
 Ուսուցչական Սեմինարը , 1866/67 թ . : Տուած  
 է քննութիւն ու ձեռք բերած ուսուցչի  
 վկայական :

2. Իսրայէլ Մարկոսեանց : Ծն . 1862 թ .  
 Շամախի : Աչակերտած է Գորպատի Ուսուց-  
 չական Սեմինարում 1884/1885 թուին : Քննու-  
 թիւն չէ տուած :









# ՀԵՂԻՆԱԿԻ ԴՈՐՊԱՏԵԱՆ ԸՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## Ա. ՀԱՅԵՐԷՆ

1. Դորպատի հայ ուսանողութիւնը (Ազգ. Մատ., հատ. 150), Վիեննա 1942 թ.: Գինը՝ դ. Փր. 1.—:

## ՀԵՏՁՀԵՏԷ ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՄՆԵՆ

2. Դիւան Դորպատի հայ ուսանողութեան (Ընդարձակ հատոր վաւերաթուղթերի):
3. Դորպատ եւ Հայաստան:
4. Սաչ. Արովեան եւ Դորպատ ու իր գերման բարեկամները:
5. Ստեփան Նազարեանց Դորպատում:
6. Քերովրէ Պատկանեան Դորպատում:
7. Գէորդ Դողոխեան Դորպատում:
8. Դէպի Դորպատ (Ուղեգրութիւն):

## Բ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆ


9. Chatschatur Abowian.
10. Dorpat und Armenien.





2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0056674

